ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-9-4-Ա

ք. Երևան 04.12.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի դեկտեմբերի 4-ի նիստում քննարկեց 2023 թվականի մայիսի 22-ին արտոնագրային հավատարմատար Անդրանիկ Խաչիկյանի կողմից ներկայացված «Վելլար գրուպ» ՍՊԸ ընկերության (Երևան 0053, Արին-Բերդի 3/21, AM) «Perfect. With no exceptions» (No20222353) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված «Perfect. With no exceptions» բառային ապրանքային նշանն իրենից ներկայացնում է գովաբանական բնույթի նիշ՝ նշելով թե՛ապրանքների և թե՛ ծառայությունների գերազանց, կատարյալ լինելու փաստը, ուստի չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան: Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ապրանքային նշանը նիշ է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար, հետևաբար ապրանքային նշանն իր հիմնական ֆունկցիան կատարելով և որպես ապրանքային նշան ծառայելով, պետք է սպառողին հնարավորություն ընձեռի մեկ տնտեսվարողի ապրանքներն և (կամ) ծառայությունները մեկ այլ տնտեսվարողի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար, իսկ հայտարկված ապրանքային նշանը վերոնշյալ հատկությունը չունի: Անդրադառնալով Ձեր կողմից

ներկայացված նկատառումներին, այն է՝ «Հայտատուն հրաժարվում է «Perfect» բառի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից և «With no exceptions» արտահայտությունը, որը զբաղեցնում է գերիշխող դիրք, որևէ աղերս չունի տվյալ դեպքում ինքնուրույն պահպանության ոչ ենթակա տարրերի դասին դասվելու հետ և նիշը ենթակա է գրանցման որպես ապրանքային նշան», հայտնում ենք, որ հայտարկված նիշում առկա «Perfect» և «With no exceptions» գրառումներն ունեն ընդհանուր կապ և լրացնում են մեկը մյուսին: Ուստի վերջիններիս համակցությունը չի ապահովում նիշի մեջ մտնող տարրերի ընկալումից տարբերվող ընկալման այլ որակական մակարդակ և այդ կապի արդյունքում է նիշը դառնում նկարագրական և գովաբանական բնույթի նիշ: Հետևաբար նիշը ընկալվում է իր ամբողջության մեջ առանց տարանջատելու վերը նշված գրառումները:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, փորձաքննության որոշումը մասնակիորեն չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանի վկայագիր տալու մասին, քանի որ չնայած ներկայացված ապրանքային նշանը գովաբանություն պարունակող կարգախոս է, սակայն «Կատարելություն» տարրին ինքնուրույն պահպանություն չտրամադրելով ներկայացված ապրանքային նշանը իր ամբողջության մեջ որպես արտահայտություն կարող է գրանցվել:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Անդրանիկ Խաչիկյանի կողմից ներկայացված «Վելլար գրուպ» ՍՊԸ ընկերության «Perfect. With no exceptions» (No20222353) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը

մասնակի բավարարել, փորձաքննության որոշումը մասնակիորեն չեղյալ ճանաչել և ապրանքային նշանի վկայագիր տալ, «Perfect» տարրին ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ